ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-15/50 Հ»

30 դեկտեմբերի 2015թ.

ք. Երևան

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Է. Գևորգյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի Ազգային Համալսարան>> Հիմնադրամն, ի դեմս տնօրեն Գ. Գալստյանի, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում <<**Հրանտ Մաթևոսյան>> մշակութային կենտրոնի շինարարության աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայության մատուցման** պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **2 307 000 (Երկու միլիոն երեք հարյուր յոթ հազար) ՀՀ դրամ, որից 2015 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում նախատեսված գումարը կազմում 294 400 (Երկու հարյուր իննսունչորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ /այսուհետ պայմանագրային գումար/**: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի ընդհանուր գնի և պայմանագրային գումարի միջև տարբերության չափով ծառայությունները կմատուցվեն դրանց համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր: Ծառայությունները մատուցման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

4.1.2 Պատվիրատուն սույն պայմանագրի 4.1.1 կետում նշված գումարը **294 400 (Երկու հարյուր իննսունչորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ** փոխանցում է ՀՀ ֆինանսների նախարարության '900008000011 մրցութային հայտերի և պայմանագրերի կատարման ապահովում' դեպոզիտային հաշվին, որը կվճարվի ծառայությունները մատուցվելուց հետո՝ Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ

ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015 թվականի դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձևակերպել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գների արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են սույն պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելիության: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենքով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի հետ կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը տրամադրված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2 , N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրի [illegible] կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պահանջի հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության [illegible] պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան [illegible] գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի [illegible] դեպքում կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քաղաքաշինության [illegible] նախարարություն	<<Հարտարապետության և
ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3	Շինարարության Հայաստանի Ազգային
ՀՀ Ֆինանսական [illegible] գանձարան	Համալսարան>> Հիմնադրամ
գործառնական [illegible]	ք. Երևան Տերյան 105
ՀՀ 90[illegible]	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
ՀԿՀՀ [illegible]	Հ/Հ 1510001964940200
Աշխատակազմի ղեկավար	ՀԿՀՀ 01506385
Է. Գևորգյան	Տնօրեն՝ Գ. Գալստյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված 1
30 12.2015 թ. կնքված ***N ՔՆ-ԲԲԱՀԾՁԲ-15/50 Հ***
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<<Հրանտ Մաթևոսյան>> մշակութային կենտրոնի շինարարության աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայություն մատուցման

1.	**Շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության ծառայության մատուցման բնութագիրը**
	Շինմոնտաժային աշխատանքների իրագործման բոլոր փուլերում դրանց նկատմամբ հեղինակային հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ ծառայության մատուցում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 1998 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 143՝ «Շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության իրականացում» հրամանով հաստատված:
2.	**Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը**
	Հեղինակային հսկողության իրականացում համաձայն հաստատված նախագծի:
3.	**Տեխնիկական առաջադրանք**
	Հսկողության իրականացում Պատվիրատուի կողմից սահմանվող պարտավորությունների համաձայն:
	Հսկողության միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում ճարտարապետաշինարարական նորմերով, ստանդարտներով սահմանված պահանջներին ու նախագծային լուծումներին:
	Հսկողության միջոցով շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախագծային լուծումներին առնչվող խնդիրների բացահայտման, անհրաժեշտ լուծումների և Պատվիրատուի հետ պարտադիր համաձայնեցման ապահովում:
	Շինարարության վարման գործընթացում նախագծային լուծումների փոփոխությունների, լրացումների և շեղումների վերաբերյալ գրառումների ու Պատվիրատուի հետ պարտադիր համաձայնեցման անհրաժեշտության դեպքում Պատվիրատուի հատուկ կանչով:
	Ծառայության մատուցման ապահովում պայմանագրով նախատեսված ժամկետներում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Պատվիրատուի հատուկ կանչով:
	Կատարողական ակտի կազմմանը աշխատանքներին մասնակցության ապահովում:
	Հսկողության արդյունքների մասին հայտ հաշվետվությունների ներկայացում:
4.	**Ծառայության մատուցման ժամկետը**
	սկիզբը / **ավարտը**
	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից / Շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	<<Ճարտարապետության և
ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3	Շինարարության Հայաստանի Ազգային
[illegible]	Համալսարան>> Հիմնադրամ
[illegible]	ք. Երևան Տերյան 105
ՀՀ [illegible]	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
[illegible]	Հ/Հ 1510001964940200
Աշխատակազմի ղեկավար	ՀՎՀՀ 01506385
Է. Գևորգյան	Տնօրեն՝ Գ. Գալստյան
	(ստորագրություն)
Կ.Տ.	

Հավելված 2
30 12.2015թ. կնքված ***N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-15/50 Հ***
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(բյուջեի 11, խումբ 01, դաս 01, ծրագիր 01)

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Գնահատվող տարվա ընթացքում նախատեսվում է ֆինանսավորել 2015թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում										
		փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	<<Հրանտ Մաթևոսյան>> մշակութային կենտրոնի շինարարության աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայություն		-	-	-	-	-	-	-	-	-	**294 400**	**294 400**

* *Վճարման ենթակա գումարները նշված են ամբողջացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քաղաքաշինության նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3
ՀՀ ՖԵՆ աշխատակազմի
գործառնական գանձարան
Հ/Հ 900011026038
ՀԿՀՀ 02202207
Աշխատակազմի ղեկավար

Է. Գևորգյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<Ճարտարապետության և
Շինարարության Հայաստանի Ազգային
Համալսարան>> Հիմնադրամ
ք. Երևան Տերյան 105
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1510001964940200
ՀԿՀՀ 01506385

Տնօրեն՝ Գ. Գալստյան

(ստորագրություն)

Հավելված 3
30 12.2015 թ. կնքված ***N*** «ՔՆ-ԲԲԱՀԾՁԲ-15/50 Հ»
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝
Պատվիրատուն՝ ի դեմս

_____ *և*

Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, *հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.*

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
ՀՀ ֆինանսների նախարարի
2015 թ. ապրիլի 1-ի
N 181-Ն հրամանի

«Հաստատում եմ»
ՀՀ քաղաքաշինության նախարարություն
(պատվիրատուի ղեկավարի անունը, ազգանունը)

_____
(ստորագրություն)

«30» դեկտեմբերի 2015 թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՋԱՑՆՈՂ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ

1 Պատվիրատուի անվանումը
ՀՀ քաղաքաշինության նախարարություն

2. Պայմանագրի (կցվում է) կնքման ամսաթիվը 30 դեկտեմբերի 2015թ.
3. Պայմանագրի համարը (ծածկագիրը)
ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-15/50Հ

4 Գնման առարկայի անվանումը
«Հրանտ Մաթևոսյան» մշակութային կենտրոնի» շինարարության աշխատանքների կատարման հեղինակային հսկողության ծառայություն

5. Պայմանագրի գումարը

294.400 / Երկու հարյուր հինգսունչորս հազար չորս հարյուր ՀՀ դրամ

6. Պայմանագրի ընդհանուր գումարը
2307.000 / Երկու միլիոն երեք հարյուր յոթ հազար ՀՀ դրամ

7. Պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում կանխավճարի չափը
ՀՀ ֆինանսների նախարարության «900008000011» դեպոզիտային հաշվին՝ 294.400 / Երկու հարյուր հինգսունչորս հազար չորս հարյուր ՀՀ դրամ

8. Պայմանագրի ֆինանսավորման աղբյուրը՝

2015 թ. ՀՀ պետական բյուջե
8.1 Պայմանագիրը պետական բյուջեից ֆինանսավորվելու դեպքում՝

Բաժին 11 Խումբ 01 Դաս 01 Ծրագիր 01

9. Պատվիրատուին սպասարկող գանձապետարանի ստորաբաժանման կոդը 001

10. Գնման ձևը (ընթացակարգ) ԲԸԱՀ

11. ԲԸԱՀ կիրառման հիմքը
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվ. 5-րդ մասի 2-րդ կետ
12. Գնման ընթացակարգի ընտրության հիմնավորումը 25.09.2015թ. N1082-Ն ՀՀ կառավարության որոշում /գնման ձևի փոփ.

13. Պայմանագրի կատարման վերջնաժամկետը 31.03.2016թ
14. Պայմանագիր կնքած անձի՝
14.1 անվանումը «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ
14.2 հարկ վճարողի հաշվառման համարը 01506385
14.3 բանկային հաշիվը 1510001964940200

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

/30.12.2015 թ. կնքված N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/50Հ պայմանագրի/

ք. Երևան <<04>> 04 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս Կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի Ազգային Համալսարան>> Հիմնադրամն, ի դեմս Հիմնադրամի ռեկտոր՝ Գ. Գալստյանի, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ կողմեր, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1111-Ն որոշմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարության և <<Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի Ազգային Համալսարան>> Հիմնադրամի միջև 30.12.2015թ. կնքված ծառայության մատուցման N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/50Հ պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.3 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին.

1.1.1 Կատարողի կողմից մատուցվող ծառայությունների գինը, 2017 թվականի համար նախատեսված ֆինանսական հատկացումների շրջանակներում, սահմանել 1 412 600 (մեկ միլիոն չորս հարյուր տասներկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, այդ թվում՝ հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

1.1.2 Հաստատել ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն ամաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2017 թվականի համար նախատեսված շինմոնտաժային աշխատանքների ավարտը:

2.2 Սույն համաձայնագիրը հանդիսանում է 30.12.2015թ. կնքված N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/50Հ ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Սույն համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Սույն համաձայնագրի N1 հավելվածը՝ կազմված 1 էջից, համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011011856, ՀՎՀՀ 02565827	<<Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի Ազգային Համալսարան>> Հիմնադրամ ք.Երևան, Տերյան 105 «Արարարտբանկ» ԲԲԸ Հ/Հ 1510001964940200 ՀՎՀՀ 01506385
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Գ. Գալստյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված թիվ 1
30.12.2015 թ. կնքված N ԲԸԱՀԾՁԲ – 15/50Հ պայմանագրի
թիվ 2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 08, խումբ 02, դաս 02, ծրագիր 03)

ՀՀ դրամ

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Երևան քաղաքի <<Հրանտ Մաթևոսյան>> մշակութային կենտրոնի կառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայություն	-	-	112 200	263 200	263 200	263 200	634 200	634 200	634 200	1 412 600	1 412 600	1 412 600	1 412 600

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011856, ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
<<Ճարտարապետության և Շինարարության
Հայաստանի Ազգային Համալսարան>> Հիմնադրամ
ք.Երևան, Տերյան 105
<<Արարարտբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 1510001964940200
ՀՎՀՀ 01506385

Տնօրեն՝

_____ Գ. Գալստյան
(ստորագրություն)